ՇՈԹԱ ՈՍԿԱՆՅԱՆԻ «ՍԵՐ , ԿՐԿԵՍ , ՓԱՐԻԶ »-Ը ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

«Սեր , կրկես , Փարիզ »՝ ահա այս վերնագրով հայաստանաբնակ նկարիչ Շոթա Ոսկանյանը Թբիլիսիի կենտրոնում գտնվող Գամրեկելի անվան ցուցասրահում ներկայացրեց իր աշխատանքը: 30

Ցուցահանդեսը նախաձեռնել էր Վրաստանի մշակույթի նախարարությունը` Վրաստանում Հայաստանի դեսպանության աջակցությամբ:

Երկու խոսք նկարչի մասին: Շոթա Ոսկանյանը ծնվել է 1960թ., Երեւանում: 1987թ. ավարտել է Մոսկվայի գեղարվեստական համալսարանը, Հայաստանի նկարիչների միության անդամ է: Ունեցել է անհատական ցուցահանդեսներ Երեւանում:

Նկարչի անհատական ցուցահանդեսն այցելող հանդիսատեսը, մտնելով դահլիճ, իսկույն շաղախվում է հեղինակի` կյանքի էսթետիկ ընկալման գաղափարախոսությամբ:

Ցուցասրահի պատերին փակցված աշխատանքները տանում են մեզ հեղինակի` Բոհեմական աշխարհը…

Մեր առջեւ կրկեսի պայծառ լուսամփոփների ճառագայթներով լուսավորված դերասաններ, մարմնամարզիկներ, ծաղրածուներ, թզուկներ… Ահա եւ Փարիզի` Է.Հեմինգուեյի բնորոշմամբ` «Մի քաղաքի, որտեղ միշտ տոն է», գողտրիկ փողոցները, Սենայի գետափնյա հինավուրց կամուրջները… Արհեստավարժ վրձնահարվածներով, որում զգացվում է ռուսական գեղագիտության դպրոցը, հեղինակը հաղորդում է դեռատի կիսամերկ կանանց թափանցիկ մաշկի նազելի թովչանքը…

«Իսպանական գնչուների» պատկերաշարը ինձ հիշեցրեց իսպանական գնչուների կրակոտ «Ֆլամենգո» պարը: «Լսում եմ» կիթառի ռիթմով լարված հիասքանչ մեղեդին, բայց ինձ համար ավելի հոգեհարազատ կլիներ` լսել հայ հոգու գունաշարի մեղեդին: Հայ արվեստի բոլոր ոլորտներում, բնականաբար, տեսնել, զգալ, լսել հայ արվեստագետի «արեւահամ բառը»:

Թբիլիսցի արվեստագետներին, ի դեպ, հետաքրքրեց հայաստանցի գեղանկարչի «Շոթա» անունը: Պարզվեց` հեղինակի պապը որոշակի ժամանակ ապրել էր մեր հիասքանչ Թբիլիսիում, եւ, ի նշան երախտիքի, իր սիրելի թոռնիկին անվանել էր «Շոթա»:

ՄԵՐՈՒԺԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ
ՎՀՆՄ -ի նախագահ , մանրանկարիչ

1 / 1